ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.04.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ՍՑ-ԼՕ-2019/20 ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Վարդազարյանի՝ «Արատտա Ռիելթի» ՍՊԸ-ի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու և «Արատտա Ռիելթի» ՍՊԸ-ին ՍՑ-ԱՄ-2019/33 ընթացակարգով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով մինչև ԵԴ/3653/02/19 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը Բողոքներ քննող անձ Միեր Անանյանին որևէ գործողություն կատարելն արգելելու վերաբերյալ 14.02.2019թ. կայացված որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով, որ 07.02.2019թ. թիվ ՍՑ-ԱՄ-2019/33 ընթացակարգը 18.04.2019թ. մակագրվել է ինձ և տրվել նոր թիվ ՍՑ-ԼՕ-2019/20 ծածկագիրը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

Կասեցնել ՍՑ-ԼՕ-2019/20 (ՍՑ-ԱՄ-2019/33) ծածկագրով ընթացակարգի քննությունը՝ մինչև ԵԴ/3653/02/19 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **Լ. ՕՀԱՆՅԱՆ**